# Դաս 40. Այլ ժողովուրդների էպոսները



*Ես կերտեցի փառքի մի գործ*
*Իմ աշխարհում հայրենի.*
*Այսօրվանից ամեն հետնորդ*
*Ինձ արժանի գովք կանի,*
*Ես չեմ մեռնի, թեկուզ անցնեն*
*Դար ու դարեր անքանակ,*
*Ջի պտղաբեր խոսքի սերմեր*
*Ես ցանեցի երկնի տակ.*
*Եվ այն մարդը, ում միտքը որ*
*Լուսավոր է և արթուն*
*Միշտ իմ մասին լավ խոսք կասի,*
*Ինձ կպահի իր սրտում....*

**«Շահնամեի» պատմական մասում հայերի մասին կան բազմաթիվ տեղեկություններ, որոնք առնչվում են 5-7-րդ դարերի իրադարձություններին: Ֆիրդուսին սիրով պատմում է 5-րդ դարի հայ զորավար Մուշեղ Մամիկոնյանի քաջագործությունների մասին.**

*Հայ Մուշեղն իր հետ ուներ*
*մեծ աշխարհազոր բանակ,*
*Իր մեծության անհավասար՝*
*ոսկի, գանձեր անքանակ:*